Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

54

Zugstrumpfen
[illegible]

8
9- -27

384

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ

1591

ԹԻՖԼԻՍ
1890

8
Գ-27

2003

2011

8
Գ-27
Ա4

ՏԻԿԻՆ Լ. ԳԱՆԻԷՐ

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ

157.91
1008/34974
13549-Գ

ՀՐԱՏ. Ս. Հ. Բ. Ը. ԾԱԽՔՈՎ.

Կատ. Ա. Արաքելեան
Հ. Ա. Արաքելեան
Աճեալ Ա. Արաքելեան

ԹԻՖԼԻՁ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
Գլուխի. պր. եւ Բարեսիրի. փող. տանիքեան
1890

29694-Ա.Հ.

ԱՐՏԱՏՊԱԾ „ՍՈՇԱԿ“ ԼՐԱԳՐԻՑ

Дозволено цензурою, Тифлисъ, 1890 г. 5-го ноября.
Тип. „Ароръ“. Т. Я. Назарьянъ, уг. Гол. пр. и Барятин. ул.

I

Տիկին Ծերարի անունը Ալզասի ժամանակագրութեան մէջ յիշվելու արժանի է։

Ալզասցու գծագրութիւնը—քառանկիւնի դէմք, ծանրահայեաց, կապոյտ, զրաւիչ աչքեր. գլխի շարժուածքի մէջ մի տեսակ վստահութիւն, ազնուութիւն կայ, որ զարմանալի է տեսնել ռամիկ կնոջ մէջ, որի համեստ կեանքը դաշտերումն է անցել։

Սակայն զարմանքը անհետանում է, երբ ծանօթանում էք այդ կնոջ անցեալի հետ։

Երեսուն տարեկան այրի էր նա. ունէր չորս մանկահասակ երեխայ—մի աղջիկ և երեք տղայ։ Նրա ողջ հարստութիւնը Վոգեզ լեռների միջավայրում գտնվող փոքրիկ դաստակերտն էր, ուր նա սկսեց մեծ եռանդով աշխատել իր ընտանիքը կերակրելու և իր զաւակները կրթելու համար։

Նա անձամբ սկսեց իր հողի մշակութիւնը։

Նա այն անմշակ, զառիվայր և խորտուբորթ ձորը մի ուրախ, պտղաբեր հովիտ դարձրեց։ Մացառուտ անտառների տեղ աճեցին բեղմնաւոր դայ-

լուկ կոչված բոյսեր։ Այն տեղերում, ուր առաջ վայրի թփեր էին բուսնում, նա ցանեց վուշ և ծխախոտ։ Այն տեղերում, ուր առաջ մորին, կոճոխուրը և վայրի թուրթը միախառնում էին իրանց անպտուղ ոստիկները, նա տնկեց խաղողի որթ։ Եւ այն հողը, որ աշխատանք և անդադար հոգացողութիւն է պահանջում, բայց որը երբէք ապերախտ չէ,—նրան առատապէս վարձատրեց։ Անձնուէր աշխատանքով և խնայողութեամբ արիաջան մայրը հասաւ իր նպատակին։

Նա իր երեք որդիներանց այնպէս էր դաստիարակել, որ նրանք հայրենիքի օգուտը ամեն բանից գերադասում էին։

Երկու մեծ որդիքը, որոնք ուսում էին առել Սեն-Սիր դպրոցի մէջ, աստիճանաւորներ էին,—Ստեփաննոսը հեծելազօրքի հարիւրապետ էր, իսկ Կլոդը հետեւակների լեյտինանտ. ամենից փոքրը՝ Ֆրանցը իր ուսումն աւարտել էր Երկրագործական դպրոցում. նա ապրում էր մօր հետ և օգնում էր նրան հողը մշակելու։

Ինչ վերաբերում է նրա մանկահասակ աղջիկ՝ գեղեցիկ Քրիստինային, նա օգնում էր մօրը տնային գործերում։ Նա զուարթացնում էր տունը իր ուրախ երգերով։ Նա հաւանոցի թագուհին էր, ծաղկանոցի ամենագեղեցիկ ծաղիկը. նրա շնորհով նրանց դաստակերտը ուրախալի տեսարան էր ներկայացնում։

Այդ չորս զաւակները համարեա պաշտում էին

իրանց մօրը և նրա անձնուէր աշխատութեան և սիրոյ փոխարէն մատուցանում էին փոխադարձ սէր և յարգանք։ Մէկ խօսքով, այս այն նահապետական ընտանիքներից մինն էր, որի նմանը միայն գեղեցիկ Ալզասում կարելի է գտնել։

Տիկին Ժերարին իր ազնիւ հոգով ոչ միայն ալզասուհի կարելի էր համարել, այլ և անվեհեր հայրենասէր։ Վաղուց նա ատում էր պրուսացիներին, ինչպէս ինքն էր ասում, նրանց չարութեան, կեղծաւոր խորամանկութեան և մանաւանդ նրանց յափշտակասիրութեան համար։ Սակայն այդ ոխը չէր տարածվում բոլոր գերմանացիների վրա։

Քրիստինան ջերմ սրտով սիրում էր մի երիտասարդ Վիւրտենբերգցու, որ մերձակայ գործարանի պաշտօնեայ էր, և որը նրա հետ կիրակի օրերը երաժշտութեամբ էր պարապում։ Տիկին Ժերարը հաւանութիւն էր տալիս այդ սիրոյն։

Երկու սիրահարները նոր էին նշանվել, երբ յանկարծ յայտնվեցաւ, թէ զարհուրելի պատերազմ է լինելու։

Կարլ Ֆոբլիշը պիտի միանար Վիւրտենբերգեան զօրքի հետ։ Սրտառուչ էր նրանց մնաս բարեաւը։ Սիրող աղջկանը թւում էր, թէ Կարլը գնալով տանում է իր հետ նրա սիրտը։

Ո՞վ կարող էր գուշակել սկսվող պատերազմի հետեւանքները։

Տիկին Ժերարը հաւատացած էր, որ Ֆրանսիան յաղթող կը հանդիսանայ, այդ պատճառով նա չէր

խանգարում խեղճ Քրիստինային հաստատ հաւատարմութիւն պահպանել դէպի իր փեսացուն։

Թնդանօթների առաջին հարուածները որոտացին. Վայսենբերգի հարուածը Ալզասին թմրութեան մէջ գցեց։

Ուրեմն Ֆրանսիացիք կարող են յաղթված լինել։

Այդ բօթաբեր լուրը զարհուրեցրեց արիասիրտ կնոջը, որովհետև նորա երկու մեծ որդիքը Մակ-Մահօնի զօրաբաժինների մէջն էին, և շարունակում էին պատերազմը։

Օգոստոսի 7-ն էր։

Առաւօտուանից սկսած, թնդանօթը հեռաւոր փոթորկի նման անդադար որոտում էր։

Եւ ում չէ յայտնի, որ թնդանօթի իւրաքանչիւր հարուածը անթիւ զոհեր է տանում։ Դուցէ վայր ընկնողը, ջարդվողը, սպանվողը մեր սրտի սիրածն է. նա խոնաւ հողի վրա ընկած է, վիրաւորված, պատառոտած, մահուան տանջանքների մէջ, առանց մնաս բարևի, առանց մի սրտակից բարեկամի, որ կարողանար նրա ձեռքը սեղմել, նրա աչքերը փակել։

Առաւօտից տիկին ծերարը և Քրիստինան լսում էին այդ չարագուշակ որոտմունքները, ահ ու դողով նայում էին միմեանց և հալումաշ լինում։ Մայրը տանջվում էր իր որդիների համար, իսկ ջահիլ աղջիկը—իր եղբայրների և փեսացուի համար։

Նոքա միշտ լրաբերների հանդէպն էին գնում և յուսաբեկ սրտով կրկին յետ դառնում։ Ֆրանցը Նէիվիլերի գիւղաքաղաքն էր վազում և անորոշ լուրեր էր բերում։ Երբեմն ասում էին թէ Ֆրանսիացիք են յաղթվել, իսկ երբեմն էլ թէ՝ Մակ Մահօնը ջարդել է քառասուն հազար պրուսիացիներ։

Յուսոյ և յուսահատութեան այդ փոփոխականութիւնը սաստկացնում էր նրանց տանջանքը։

Երեկոյեան 9 ժամն էր։ Դեռ ևս ոչ մի ճիշտ լուր չը կար, թէև թնդանօթի որոտումն արդէն չորս ժամ առաջ էր դադարել։ Կար մի յաղթութիւն և մի պարտութիւն. բայց ո՞ւմն էր յաղթութիւնը, և ո՞ւմը՝ պարտութիւնը . . .

Այդ շուտով յայտնի պէտք է լինէր։

Յանկարծ այն ճանապարհի վրա, որ տանում էր դէպի հովիտը, երևացին անհամեմատ և անսանձ ձիաների վրա նստած տիւրկոսներ. ասպա արագաթռիչ հեծելազօրքը վազում էր Սավերնի ուղղութեամբ։ Նոյն կողմն է արշաւում մարդկային մի խառնիճաղանճ խումբ։

Հրացանաձիգները, հեծելազօրքը խառնափընթոր կերպով շտապում էին, միմեանց մղելով, այնպիսի մի անկարգութեամբ, որ նայողի վրա զարհուրանք էր բերում։

Դա փախուստ էր և սարսափելի փախուստ։

Ձորերի միջով անցնող այս խառնաշփոթ ամբոխի կորուստը ահագին պէտք է լինէր։ Կարծես թէ անսպասելի կոտորածը զարհուրանքի մէջ էր

գցել այժմ բոլոր փախստականներին։ Նոքա վազում էին անխօս և աչքերը ցած գցած։ Նոքա շփոթութիւնից վայր էին գցել իրանց սաղաւարտները, հրացանները, զրահները։

Հետևակները, ձիաւորների ետևից նստած, գրկել էին նրանց և կուչ եկել։

Դրանցից յետոյ գալիս էին թնդանօթակիր սայլակները առանց թնդանօթների։ Նրանց հետևում էին ուրիշ սայլակներ, որոնց մէջ պառկեցրած էին վիրաւորները, մեռնողները և ծանր քնի մէջ ընկղմված, յոգնած զինուորները։

Այդ տխուր գնացքը տևեց ամբողջ գիշեր։

Ամբողջ գիշերը տիկին Ժերարը սպասեց, յուսալով՝ որ նրա որդիները տուն կը մտնեն. բայց իզուր. նոքա չեկան։

Նա հարցնում էր զինուորներին, որոնք անդադար մտնում էին խմելիք կամ ուտելիք խնդրելու. բայց ոչ մինը չը կարողացաւ նրան տեղեկութիւն տալ, թէ ինչ եղան հեծելազօրքի և հետևակների 3-րդ գունդը։

Քրիստինան չէր վստահանում հարցնել, թէ արդեօք Վիւրտեմբերգցիները մասնակցե՞լ են պատերազմին, թէ ոչ։ Այժմ նա մինչև անգամ ամաչում էր հարցնել Ֆրանսիային յաղթողների՝—գերմանացիների մասին։

Բանի գիշերը մօտենում էր, տիկին Ժերարի երեսը աւելի և աւելի էր գունատվում։ Նա չէր խօսում. նրա դաժան և անշարժ աչքերը

կարծես թէ նայում էին լեռների և մեծ անտառների միւս կողմը։

Ֆրանցը տեսնում էր մօր տանջանքները և ինքն էլ նոյնքան տանջվում էր։

Ֆրանսիան յաղթված, Ալզասը յափշտակված,—նա սարսափում էր երբ լիշում էր այդ բանը։

—Մայր, ասաց նա, երբ հայրենիքը դժբաղտութեան մէջ է, բոլոր ֆրանսիացիք պէտք է զէնք վերցնեն։ Եթէ թոյլ տաս, ես վաղը կերթամ պաշտպանելու մեր սիրելի Ալզասը իր յափշտակողներից։

—Լռիր, որդեակ, պատասխանեց մայրը վախեցած կերպով,—լռիր։ Ո՞վ արդեօք կըպաշտպանի մեզ, եթէ դու այստեղ չըլինես։

Լուսադիմին արիւնով և ցեխով թաթախված մի զինուոր յանկարծ ներս մտաւ, և յոգնածութիւնից մարելով վայր ընկաւ։

Տիկին Ժերարը մի ճիչ արձակեց։ Նա ճանաչեց Հարիւրապետի սպասաւորին։

Տիկինը վշտալի և աղերսալի հայեացքով վրա ընկաւ։ Նա չէր համարձակվում նրանից հարց ու փորձ անել։

Զինուորը լուռ էր։

—Իմ որդիս, բացականչեց վերջապէս տիկին Ժերարը։

Զինուորը խոնարհեցրեց աչքերը։

—Մեռաւ, հարցրեց նա դողդողջուն ձայնով։

—Նա պատուիրեց ինձ իր վերջին բարևը բերել ձեզ, պատասխանեց զինուորը։

Տիկին ծերարը կրկին խոնարհվեց դէպի վիրաւորեալը։

—Իսկ Կլօդը, արտասանեց նա դժուարութեամբ։

—Նրան ես տեսայ ընկնելիս, շշնչաց թուլացած զինուորը։

Խեղճ մայրը մնաց փետացած։

Յետոյ վսեմութեամբ լի շարժուածքով դառնալով դէպի իր վերջին տղան՝ ասաց հաստատուն ձայնով.

—Ֆրանց, վաղը դու կերթաս պատերազմ։

II

Տասն և հինգ օր անցաւ Ֆրեշվիլերի հարուածից յետոյ և Ֆրանսիան զգաց իր գլխի վրա արշաւանքի հետևանքները։

Մինչև որ թագաժառանգի գունդը անցնում էր Վոգեզ լեռները, Մեց քաղաքում Շտէինիցի և Ֆրիդերիկ-Կարլոսի զօրքի հետ միանալու համար, Վերդերը իջնում էր դէպի Ստրազբուրգ՝ նրան շրջապատելու։

Ամբողջ Ալզասը ալեկոծութեան մէջ էր, որովհետև ծերերը յիշում էին առաջին արշաւանքի եղեռնագործութիւնները։

Ժողովուրդը, գլուխը կորցրած, գաղթում էր դէպի մերձակայ անտառները. խանութները փակում էին, և շարժական կայքերը բարձում սայլակների վրա։

Գիւղացիները ցնորուածի պէս վազում էին, քշելով իրանց առջևից, ինչպէս Աբրահամի ժամանակը, իրանց անասուններին և աղաղակում.

—Դէպի սարը, դէպի սարը։

Վոգեզների անանցնելի ճանապարհներին երևում էին լաց եղող կանայք, յոգնած, ուշաթափ,

ամեն քայլափոխում վայր ընկնող երեխաներ, դաժան դէմքերով տղամարդիկ։

Երեկոյեան հինգ ժամն էր։ Արևը գեղեցիկ ճառագայթներով Նէիվելերի թարմ հովիտների վրա լոյս և տուր էր սփռում։

Ի՞նչ խաղաղութիւն։

Կարծես թէ դաստակերտը դատարկ էր։

Քրիստինային՝ գոյնզգոյն ծաղիկներով լի ծաղկանոցում բուրում էր նարգիսի, մեխակի, երամի և այծմօրուքի հոտ։

Մի քանի հաւեր, բագումը, արագ-արագ կըտցահարում էին զանազան փշրանքներ. մի աշխոյժ և հպարտ աքաղաղ հնչեցնում էր իր սրաձայն ծուղրուղուն։

Բլուրների վրա արածում էին շիկագոյն կովեր. դաշտը, իր ուռենիներով և սօսիի ծառերով, փայլում էր ոսկենման և սարգ գոյնով։

Այդպիսի ուրախ և խաղաղ տեսարանի առջև ինչպէս կարելի էր երևակայել, թէ մի քանի մղոն հեռու տեղի են ունեցել զարհուրելի պատերազմ, սարսափելի տանջանքներ . . .

Ի՞նչպէս երևակայել, որ այդպիսի խաղաղ կտուրի տակ մարդու սիրտը կարող է սարսափելի կերպով տանջվել։

Ֆրանցը գնացել էր։ Նա մտել էր կամաւոր հրացանաձիգների գնդի մէջ։

Տիկին Ծերարը ուղարկել էր Քրիստինային մի բարեկամի մօտ, որ բնակվում էր Վոգեզների զա-

ռիվայրում գտնված գիւղերից մէկում։ Ինքն էլ միայնակ էր մնացել դաստակերտում։

Առում էին թշնամին թալանել է Նէիվելը գիւղաքաղաքը և մօտենում է։

Տիկին Ծերարը շատ շփոթված էր։ Խօսում էին կամաւոր հրացանաձիգների և պրուսացիների մէջ, մօտակայ անտառներում, անցեալ գիշեր պատահած պատերազմի մասին։

Ժամանակ առ ժամանակ նա մօտենում էր դրան շէմքին, ականջ էր դնում և կարծես իր հայեացքով ինչ որ բան էր հարցնում ծառերով պսակված լեռնագագաթներին և այն ճանապարհին, որ տանում էր դէպի գիւղաքաղաքը։

Յանկարծ նա լսեց մի ինչ որ խուլ ձայն։ Շուտով նա տեսաւ սրածայր սաղաւարտներ, որոնք փայլեցին ճանապարհը շրջապատող ծառերի միջից։

Նոքա գալիս էին։

Տիկին Ծերարը սպասում էր նոցա անվրդով։

Եկողը հեծելազօրքի զունդն էր։

Նախ երկու զինուոր դիմեցին դէպի բնակարանը։ Նրանց ձիաների սանձերը արձակ էին, փետուրները ծածանում էին, սուրերը մերկ, աչքերը կարմրած, սարսափելի։

Տիկին Ծերարը մնաց ոտքի վրա կանգնած, անշարժ։

—Ի՞նչ էք կամենում, հարցրեց նա ձիուց ցած իջնող օֆիցերին։

—Ինչ եմ կամենում . . . պատասխանեց նա

գեղեցիկ Ֆրանսերէնով. Ես կամենում եմ տեղաւորել այստեղ իմ գունդը։ Մենք քաղցած ենք, մեզ լաւ ճաշ բերէք. շուտ։

—Ես ձեզ ոչինչ չեմ տալ, պատասխանեց հպարտութեամբ ազնիւ կինը։ Դուք տէր էք, վերցրէք։

—Օ՜հո, եթէ դուք մեզ հետ այդ կերպ կը խօսէք, լաւ չի լինիլ. զգոյշ կացէք։ Մեզ ասացին, որ այստեղ գտնվում են կամաւոր հրացանաձիգներ։

—Ոչ. չը կան. փնտռեցէք։

—Դուք անշուշտ տեսած կը լինէք նոցա մօտակայ անտառներում։

—Ես չեմ տեսել։

Նոյն վայրկեանին դաստակերաը շրջապատող լեռնագագաթներից լսվեց հրացանների ձայն։

—Դուք խաբում էիք, բացականչեց աստիճանաւորը իր ատրճանակի փողը մեկնելով դէպի տիկին Ժերարի կուրծքը։

Նրա դէմքը խոժոռվեցաւ։

—Ո՞րքան են, գոչեց աստիճանաւորը. ասացէք։

Նա չը պատասխանեց։

Բայց հեծելազօրքը արդէն մօտենում էր և շրջապատում անտառները։

Օրը մթնում էր։ Ամենայն կողմից լսվում էր թնդանօթի որոտ։

Տիկին Ժերարը սարսափելով էր լսում այդ որոտը։ Թնդանօթի իւրաքանչիւր թնդիւնը արձագանք էր գտնում նրա սրտի մէջ։

Յանկարծ նա նկատեց մարդկանց ստուերները, որոնք անցնում էին գայլուկ բոյսերի միջով և զգուշութեամբ մօտենում։

—Մայր, ասաց մի ձայն։—Մենք ենք։

—Մտէք, շուտ, պատասխանեց նա։

Քառասուն տղամարդ մտան դաստակերտը, մէկը միւսի յետևից։

Մի վայրկեանում դիմադրութիւնը պատրաստ էր։ Նոքա ժողովեցին սայլերը, երկրագործական գործիքներ, մահճակալներ, կահկարասիք և շինեցին մի բարձր պատնէշ։ Դռների և փեղկերի մէջ ծակեր բաց արին։

Եւ սպասեցին։

Լուսինը դանդաղ կերպով բարձրանալով լեռների միջով, հրեղէն գնդի նման լուսաւորեց հովիտը։

Հեծելազօրքը, որ ցրիւ էր եկել կամաւորների հրացանների ձայնից, կրկին խմբվեց և շտապով վերադառնում էր դէպի դաստակերտը։

Սկսվեց մի սարսափելի, շատ սարսափելի յարձակումն։

Պատնէշը ոչնչացրին։ Ծակված դռները և փեղկերը թոյլ էին դիմադրութեան համար։ Դուցէ շուտով դաստակերտը աւերվէր և կամաւոր հրացանաձիգները գերի պիտի ընկնէին կատաղի թշնամու ձեռքը։

Տիկին Ժերարը ներկայ էր և անվեհերութեամբ սպասում էր այդ կռուի վախճանին։

Այս կռիւը անօգուտ գտնելով՝ մի քանիսը ա-

ռաջարկեցին անձատուր լինել։

—Անձնատուր լինել, գոչեց տիկինը,—Երբէք։ Ուրեմն դուք չէք ճանաչում նրանց։ Նրանք ոչ պատիւ ունին, ոչ խիղճ. ձեզ կը սպանեն։ Ոչ, ոչ, փոխէք, այն կողմը փախէք։

Այս ետևից մի անցք բացանելով, նա վերցրեց խոտի խուրձեր, նոցանից մի խարոյկ շինեց և վառեց։

—Փախէք, կրկնեց նա։

Եւ նա իր դաստակերտը կրակ տուաւ, այն դաստակերտը, ուր գտնվում էին, նրա քսան տարվայ աշխատանքի և խնայողութեան պտուղները, նրա բոլոր լիշատակները։

Հրդեհը կանգնեցրեց թշնամուն։

Բայց կամաւոր հրացանաձիգները, որոնք այդպիսի հերոսութեան շնորհով փրկվեցին, մի քանի օրից յետոյ գերի ընկան հեծելազօրքի ձեռքը։

Նրանց երկար դիմադրութիւնից զայրանալով, պրուսացիները գործ դրեցին մի անգութ վրէժխնդրութիւն . . .

Երբ նրանք հեռացան Նէիվելերից, տիկին Ժերարը, որ պատսպարված էր Քրիստինայի մօտ, նրա հետ միասին վերադարձաւ դաստակերտը։

Երբ նրանք մօտենում էին՝

—Նայիր, ասաց Քրիստինան սեղմվելով մօր կրծքին,—այն ինչ է ճանապարհի մօտ։ Կարծես թէ զինուորներ են։ Արդեօք պրուսացիք են, թէ ֆրանսիացիք։ Ի՜նչպիսի անշարժութիւն։ Եւ ի՜նչ զարմանալի բան. նրանց ոտները դետնին չեն կպչում։

(1008/34974) 13879-08

Տիկին Ժերարը դողդողջիւն սրտով, վախից լռած աչքերով, նայում էր առանց պատասխանելու։

Ճշմարիտ, այդ ի՞նչ կը նշանակէ։

Փոքր ինչ մօտենալով, նրանք ճանաչեցին կամաւոր հրացանաձիգների նշանագգեստները։

Նրանք շտապեցին։

Զարհուրանք . . . Այդ կախված դիակներ էին։ Նրանց կապտագոյն, արիւնալից երեսները զարհուրելի կերպով ալլանդակված էին։

Վայրենիները նախ քան կը կախէին կամաւոր հրացանաձիգներին, կտրել էին նրանց քթերը և ականջները, և դրել ճանապարհի ափին, որպէս օրինակ անցորդների համար *։

Այդ սարսափելի տեսարանի առջև, տիկին Ժերարը մի խօսք անգամ չը կարողացաւ արտասանել։ Զարհուրելի վշտերից նրա կոկորդը սեղմվում էր։ Նա խելագարի նման վազում էր մէկ դիակից դէպի միւսը, աշխատելով ճանաչել ալլանդակ դիակների մէջ իր որդուն, իր սիրելի Ֆրանցին։

Նա վերջինն էր անբախտ կախվածների շարքում։

Այն ժամանակ կատաղաբար բռնելով իր աղջկայ ձեռքը՝ տիկին Ժերարը ասաց.

—Երբէք, լսում ե՞ս, Քրիստինա, երբէք չես ամուսնանայ այս բարբարոսներից մէկի հետ։ Ես աւելի լաւ կը համարեմ քեզ մեռած տեսնել, քան թէ ամուսնացած մէկ գերմանացու հետ . . .

---

* Այդ հրէշաւոր դէպքը Ճշմարիտ պատահել է Ալզասում։

III

Համարեա երկու տարի էր անցել պատերազմից։

Գազանային, կատաղի յաղթութեան շնորհով, հոգով Ֆրանսիական Ալզասը դարձաւ գերմանական երկիր։

Գարշելի յաղթողը է չար գործ դրեց իր ոյժը, ստիպելով իր նոր հպատակներին ընտրութիւն անել՝ կամ մնալ Ֆրանսիացի և հեռանալ Ալզասից, կամ դառնալ գերմանացի և մնալ այնտեղ։

Տիկին ծերարը աւելի Ֆրանսուհի է, քան ալզասուհի։ Երբէք նա պրուսիացի չի լինիլ. երբէք նա այդ ատելի անունը չի կրիլ։

—Հարկաւ, ասում էր նա, Ալզասում պիտի մնան մի քանի Ֆրանսիացիք, որ Ալզասը լինի Պրուսիայի կողքին կպած մի աւելորդ մարմին, որպէս զի վրէժխնդրութեան օրը բոլոր ալզասցիք ոտքի կանգնեն ճնշողի դէմ։ Բայց ես չեմ կարող մնալ, որովհետև անկարող կը լինեմ ատելութիւնս թագցնել։

Ուրեմն նա պիտի թողնէր իր դաստակերտը։ Նա պիտի ծախէր այն հողը, որ մշակել էր քսան տարի շարունակ, այն ծառերը, որ տնկել էր, այն դաշտերը, որ պարարտացրել էր այնքան դժուարութեամբ։ Նրա կարծիքով, այդ դեղեցիկ հովիտը զարհուրելի էր այն օրուանից, երբ պրուսական հող էր դարձել։ Նա չէր կարող այնտեղ բնակվել, այնտեղ ապրել, մանաւանդ որ նա լի էր իր զաւակների յիշատակներով, որոնցից չէր մնացել և ոչ մինը։

1872 թուականի հոկտեմբեր ամսվայ առաջին օրերն էին։

Այն դաստակերտը, որ երբեմն այնպէս հաճոյական էր, որի բարձր ծառերի տակ ծածկված էր խորհրդաւոր բախդաւորութիւն, մնացել էր այնպէս, ինչպէս էր պատերազմի միւս օրը։ Նա աւերակների և անկարգութիւնների մի տեսարան էր միայն ներկայացնում։

Հայրենասէր տիկինը, իր հեռանալը աչքի առաջ ունենալով, չուզեց ոչինչ նորոգել։

Քանդված կտուրը թեքված էր։ Կիսաւեր պատերի միջից երևում էր տան ներսը։

Հաւանոցը դատարկ էր։ Ագռաւը ժամանակ առ ժամանակ արձակում էր այդ խորին լռութեան մէջ իր տխուր աղաղակը։

Ծաղկանոցը աւերված էր։

Տիկին ծերարը մի ծեր սպասաւորի օգնութեամբ գնալու պատրաստութիւններ էր տեսնում։

Նա հաւաքել էր ամբարի մէջ այն կարասիքը

և իրեղէնները, որոնք հրդեհից ազատված էին, որովհետև դաստակերտի միայն կէսն էր աւերված։

Ի՜նչպիսի փոփոխութիւն էր նկատվում այն դէմքի վրա, որ առաջ այնպէս պարզ և գեղատեսիլ էր։ Նրա հայեացքը մռայլ էր և վայրենի։ Երևում էր, որ նա պահպանել է անցած զարհուրանքի արտայայտութիւնը։

Առաջվայ պարզ և հանդարտ ճակատի վրա նկատելի էր մի խորին, վշտակիր կնճիռ։ Բերանի երկու կողմը կազմված էր դառնութեամբ և տանջանքով լի մի գիծ։

Այնուամենայնիւ քաջ կինը այնքան վշտերից էլ ընկճված չէր։ Ընդհակառակը, կարծես թէ նրա մէջքը աւելի ուղիղ ձև էր ստացել և նա իր գլուխը այնպէս էր բռնում, որ ցոյց էր տալիս այդ կնոջ անվեհեր բնաւորութիւնը։

Երեկոյ էր։ Երկինքը մոխրագոյն։ Անձրևը անդադար գալիս էր։ Քամին սաստիկ փչում էր։

Դուռը ծեծում էին։

Ո՞վ կարող էր, արդեօք, գալ այդ աւերված դաստակերտը այդպէս ուշ, և այդպիսի վատ եղանակին։

—Բացէք, Յովսէփ, ասաց տիկին Ժերարը։

Յովսէփը բացեց։

Մի շէկ մարդ երևաց շեմքի վրա։

—Տիկին Ժերա՛ր, բացականչեց նա։

Եւ նա մօտեցաւ, ձեռքերը մեկնած, որ նրան համբուրէ։

Բայց տիկին Ժերարը իր հպարտ, սքանչելի

հայեացքով կանգնեցրեց նրան իր տեղը։

—Ի՞նչու էք եկել, հարցրեց նա։

—Ես եկել եմ պահանջելու, որ կատարէք ձեր խոստմունքը։

—Ի՞նչ խոստմունք։

—Չէ՞ք ճանաչում Կարլ Ֆորլիշին։

—Ես գիտեմ ձեր անունը, բայց ձեզ չեմ ճանաչում։ Դուք գերմանացի էք, և երբէք, լսում է՞ք, երբէք ես ձեռք չեմ տալ մի գերմանացու։

—Բայց Քրիստինան ինձ կը ճանաչի։ Քրիստինան շարունակում է ինձ սիրել, ես հաւատացած եմ։ Քրիստինա՛։ Ո՞րտեղ է Քրիստինան։

—Դուք կամենում էք նրան տեսնել։

—Օ՜հ, այո՛, շուտով։ Ես սիրում եմ նրան. ես չեմ դադարել նրան սիրելուց, միշտ մտածել եմ նրա մասին, թէև նա իմ նամակներիս պատասխան չէ տուել։ Նայեցէք, իմ կրծքին կրում եմ նրա թանդագին պատկերը և ահա այն „լիշատակի ծաղիկը“, որ ինձ տուեց իմ գնալու օրը։

—Շատ լաւ։ Դուք նրան կը տեսնէք։ Եկէք։

Նա բացեց ամբարի փոքրիկ դուռը։

Դա մի մթին տեղ էր, ուր Կարլ Ֆորլիշը նկատեց երեք մետաղեայ երկայն սնդուկներ։ Նոցանից մէկի վրա դրած էր սպիտակ, թառամած վարդերից շինած մի պսակ։

Այդ երեք դագաղների առջևը մի լապտեր էր վառվում։

—Բայց Քրիստինան, ես չեմ տեսնում Քրիստի-

նային, վախեցած և խեղդած ձայնով բացականչեց երիտասարդը։

—Նա այնտեղ է, ասաց տիկին Ժերարը, ցույց տալով այն դագաղը, որի վրա դրած էր սպակը։ Նա ձեզ սիրում էր, բայց իր հայրենիքը դերադասեց ձեզանից։ Նա դրանից էլ մեռաւ։ Իսկ ես բաղդաւոր եմ, որ նրան տեսնում եմ մեռած, քանի թէ մի գերմանացու տուած։ Հասկանում է՞ք, արդեօք, Կարլ Ֆօրլիշ։

Կարլը հեկեկալով ծունդ չոքեց իր հարսնացուի դագաղի առջև։

—Իմ չորս որդիքս մեռան,—խուլ և դողդողջիւն ձայնով շարունակեց տիկինը։ Գերմանացիք սպանեցին նրանց։ Բայց նրանք չը բաւականացան՝ որ որդոցս խլեցին, նրանք յափշտակեցին և իմ հայրենքս, այն հողը, որտեղ թաղված են նախնիքներս, որտեղ ես ծնվել եմ, որտեղ ես ապրել եմ և որտեղ յոյս ունէի մեռնելու։ Ոչ միայն ես չէի կամենում, որ Քրիստինան ամուսնանայ գերմանացու հետ, այլ և չեմ կամենում, որ նրա ոսկորները հանգստանան պրուսական հողի վրա։ Այս երկրորդ դագաղը պարունակում է իմ խեղճ Ֆրանցի մարմինը. այս միւսը՝ իմ ամուսնու ոսկորները։ Ես պիտի տանեմ ինձ հետ այս սուրբ մասունքները *։

* Բազմաթիւ են այդպիսի օրինակներ։ Շատ տեղերում գաղթականները հանել են իրանց մեռելներին՝ իրանց հետ տանելու համար։

—Իսկ ինչ որ վերաբերում է իմ մնացած երկու զաւակներին, որոնց մարմինը ես չը կարողացայ գտնել, թող նրանց արիւնը սրսկվի նրանց սպանողների գլխին։ Իմ Ալզասեան հայրենիքում մնացած նրանց ստուերներից թող դուրս գայ մի վրիժահան։

Կարլը վեր կացաւ։ Լսելով տիկին Ժերարին, նա շատ յուզվեց։

—Դուք իրաւունք ունէք ատել Պրուսիան, ասաց նա,—ես էլ ձեզ պէս ատում եմ այդ նոյն Պրուսիան։ Ես ատում եմ նրան՝ նրա հարստահարութեան, նրա յափշտակասիրութեան, նրա չարագործութեան համար։ Մթթէ մենք, վիւրտեմբերգցիներս, զոհված ժողովուրդ չենք։ Բոլոր գերմանացիք, տիկին, պրուսացիներ չեն։ Գերմանիայում ահագին կուսակցութիւններ կան, որոնք պատրաստվում են Պրուսիայի ատելի լուծից ազատվելու։ Եւ երբ արդարադատութեան օրը կը մօտենայ, այն սարսափելի օրը, երբ Ալզասը կապստամբվի, ես, այո՛, ես էլ կը լինեմ այն վրիժահանների մէջ, որոնց դուք փափագում էք։ Երդվում եմ Քրիստինայի դիակի վրա։ Այժմ թոյլ կը տա՞ք ինձ, ձեզ մայր կանչել։

Լսելով Կարլի այդ խօսքերը, տիկին Ժերարը զգաց մի վայրկեան իր ատելութեան նուազումը։ Նրա դէմքը փոխվեց և նրա մեղմացած աչքերից սկսեցին արտասուքներ թափվել։

Այդ առաջին արտասուքներն էին, որ նա թափեց իր որդիների մահից և հայրենիքի դժբախտութիւնից յետոյ։

Կարլը կարծեց, որ յաղթել է։ Նա կրկին ձեռք մեկնեց նրան։

Բայց տիկին Ժերարը չընդունեց։

—Ի սէր Աստուծոյ, աղաչում էր Կարլը, տուէք ինձ ձեր ձեռքը որ իմ վիշտը այնքան դառն չը լինի, որ իմ Քրիստինայի կորստեան վիշտը մեղմանայ։

—Այն օրը, երբ Ալզասը վերադարձրած կը լինի Ֆրանսիային, պատասխանեց հայրենասէր կինը, —այն օրը միայն ես կարող եմ ձեր ձեռքը սեղմել, այն օրը միայն Ֆրանսիացիք կարող են գերմանացոց հետ հաշտվել։

Վ Ե Ր Ջ

ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Լույս տեսան՝

ԱՅՆՏԵՂ ԵՒ ԱՅՍՏԵՂ, Գ. Արծրունու . . 10 կ.
ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի . . . . . 50 կ.
ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ, Քրանսերէնից թարգմանեց
Օրիորդ Գ. Յ.

ԳԻՆԸ 5 ԿՈՊԷԿ

Դիմել այս հասցէով՝

ԹԻՖԼԻՍ

Խ. Մալումեան